

թշնամուտն բորբոքած բոցերը չէին կարողացած սպառել ընկել ։

Արդի լուրջ պատմագրերը քիչ մի չափազանց կը համարին ըսել թէ Հռոմայ ամեն հոյակապ յիշատակարանները համանշամայն կործանած ըլլան ։ Եւ փաստ կը բերեն աւարառութեան երեք որ միայն տեսելը, Հռոմայ տարորինակ ընդարձակութիւնը, և մեծամեծ շէնքերուն բազմութիւնը ։ Տարակոյտ չկայ որ բարբարոս հրոսակները հեղեղօրէն վազած են հսկայապէրալ շինուածոց վրայ, այլ ո՞ր թէ քանդած են ըստզեանք և յաղթական կամարները, վասն զի, ըստ կարծեաց յիշելու հնախօսոց, աւար ժողովրէն ու փոխադրելէ զոտ՝ չէին կրնար երեք տոռան մէջ բաւոր շէնքերն ալ վար առնելու ժամանակ գտնել ։ Ոսկիէ և արծաթէ արձաններ եթէ գտնէին, մէկէն վար կ'առնուին, կը փշուէին և սալերուն մէջ կը բեռցընէին, իսկ պղնձէ հոսքէ արձաւար արձաններն և մարմարեայ անդրինները չէին հրապուրել շէնքը, շունենալով բնու գեղարուեստից ոչ և Թաթարներն ։

Յաւալին և Կափշէին այն է՝ որ ողբէ ձայն մի, հառաշնորած արձագանգ մի, արցունք և հեծութիւն մի հռոմայեցի կուրծքերէն և աշքերէն զուրո ցայտելով և զոր զորշմուշելով չէ հասած մեղի. այդչափ անզգայացած էր նոյն ժամանակ այս ժողովուրդն, այդ չափ կարնցուցած էր իր հին փառքին յիշատակը ։ Մինչդեռ Գրիստոսն երկու դար առաջ՝ մեծն Սկիպիոն Վարքեզոնի աներակներուն վրայ նստած, կ'ողբար իր հայրենեաց՝ Հռոմայ ազազայ անկմանը վրայ ։

Երբ ամենքը կը լռէին, անապատաւոր մի, Ս. Հերոնիմոս. որ ի Հրէաստան քաշուած՝ Բեթլեհէմի մէջ կը ճգնէր, ջնջելով Հռոմայ անկումը, այսպէս կը զրէր խորին ցաւով առ Եւստորիս կոյրը. « Տասնըութ զրբի բաժնած մեկնութիւն զրբի էր Եսայեայ մարդարեութեան վրայ, և կը պատրաստուէին Եդէկիելի վրայ աշխատելու, ինչպէս որ շատանց ի վեր խոստացած էր զեդի, ո՞վ Եւստորիս կոյր քրիստոնեայ, և բարեպաշտան ժողով Պաւլոսի, և ահա լռեցի Պամաքիոսի և Մարկելլայի մահուան դաժի ։ և Քաղքին առման բոլոր, և բազմութիւ հոգեհարազատ եղբարց և քոյրերու սպանութիւնը ։ Ինքզինքն կորնցուցի, ձայն ինչպէս ցաւ, և զիշեր ցորեկ ուրիշ մառախուլէ շունեցայ՝ բայց եթէ ինչպէս անոնց օգնութեան հասնիմ, և կը թուէր ինձ որ ես ալ դերութեան մէջ ինկած եմ Որովհետեւ աշխարհիս ճաճանչաւէտ լոյսն

արդ մարեցաւ, որովհետեւ հոռոճական կայսերութեան զլուխն խղեցաւ մարմնէն, և լուսազոյն ըսելով. որովհետեւ Հռոմով բաւոր աշխարհը կորաւ, մահն և համր կտրեցայ և այն. պիտի վհատութիւն եկաւ վրաս, որ բարւոյ զործանէութիւնը գնաց ինձէ. և ցաւս անդադար կը նորագոյն և սիրտս ուժգին կը բաբախէր և կը կարծէր թէ միտքս բոցերով լըրջուպատած էր ու ։

Հերոնիմոս, որ աշխարհային մեծութեանց հոգերն թողնով ինքզինքն Առաքելոյ ծառայութեան նուիրած էր, և առանձնաւորով յԱստուծոյ մերձ յիշուողէն, շփուածով իր հայրենեաց թշուառութեան վրայ, կ'ըսէր. « Ձայնս կարսնցուցի, և կը փշկէիմ հեծկլտանքով, երբ կը յիշեմ որ ընկճուած է այն քաղաքն որ համբարէն աշխարհի տիրեր էր ։ » Իսկ անդին, իստիւյ մէջ, Հռոմայ մօտ, կայրոր մի Պերիոս, սրուն աթոռ և մայրաքաղաքն աղէտալի կուրծառան մատնուած էր, և որ ամեն մարդէ աւելի պիտի զգար այս անգարմանելի ճախուղութեան ծանրութիւնը, երբ չըլլապատուած ներքինի զաւատականներէ՝ լսեց Հռոմայ արկածը, կարծեց թէ իր սիրտն մէկ հաւն մեռեր է, որուն անուն զրած էր ինքը՝ Հռոմ, աշխարհիս մայրաքաղաքին անունը ։

Հռոմայ աւարառութենէն քիչ վերջը մեռաւ Աւարիկոս, նոյն 410 տարւոյ մէջ ։



ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵՍԵՑ

1812-1879

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ Ռուսահայոց մէջ 1858էն վերջը փայլ տուաւ, թէպէտ Կովկաս (1846-8) և Արարատ (1850-1) իրենց կտրճատեւ կենտոյց մէջ անոր զաղափարն ու ճաշակը տուած էին. սակայն ոչ նոյն գիտական և ոչ ժողովրդական ուժգին մղումը պատճառեցին ինչ որ մի և նոյն ժամանակ հրատարակուիլ սկսող Ճապարակ, Միգրոս Հայաստանի և Հիսիստփայլ թերթերը ։ Մենք պիտի խօսինք վերջնոյս և անոր մեծապատիւ խմբագրին՝ Ստեփանոս Նազարեանցի վրայ ։

Նազարեանց կամ Շահնազարեանց Ստեփանոս, խոյեցի Տէր Եսայի քահանային կրտսեր որդին էր, ծնած ի թիֆլիս 1812ին: «Իմ նախակրթական ուսումն, կը պատմէ ինքը Ստեփանոս, մի թշուառ և աղքատին բան էր, համեմատելով այժմեան մանուկների բազմամասնեայ ուսանելի նիւթերին, մի փոքր ընթերցանութիւն գրող լեզուով գրքերի, լոկ հայերէն և այն իսկ անհասկանալի հին հայերէն, որ չունէր ոչինչ սնուցիչ նիւթ իմ երեխայական հոգու համար: Իմ առաջին կրօնական դաստիարակութիւնն ստացել եմ Նոր Կտակարանի պատմութիւնից՝: Տասն և չորս տարեկան յանձնուեցաւ մեծ եղբորը հետ՝ այն ժամանակները մեծ համբաւ ունեցող Ղարաբաղի Պողոս վարդապետին, որ Ներսիսեան դպրոցի բացուելէն առաջ, վանքի եկեղեցւոյ բակը խոյցի մը մէջ քանի մը աղոց հայկաբանութեան դաս կու տար: Անոնց մէջ էր խաչատուր Արուսեանն ալ, որ Նազարեանցի հետ Չամչեանի քերականութիւնը և Ազոնցի ճարտասանութիւնը կը մշտեցնէր: Քիչ վերջ Ներսիսեան դպրոցի մէջ՝ նոր ուսուցիչ մ'ալ ունեցան հայերենի, Պ. Առաքել Արարատեանը. իսկ կրօնագիտութեան համար հրաւիրուած էր հոն Յար. Ալամկարեանց քահանայն, որ իր քաջամարտ աշակերտները, պատրաստելէն վերջ, կը դրկէր կիրակի օրերը եկեղեցեաց մէջ բարոզելու: Անգամ մը Նազարեանցի ինկալ Հաւարարու Զորարարի եկեղեցւոյն մէջ բարոզել. որ վեմով ոճով ու ձեւերով կ'ատենաբանէր աստուծոյ պաշտութեան վրայ, օրինակ բերելով վարդանանց նահատակութիւնէն երբ մեր բարոզիչը իր ճառին մէջ կրկնեց մի քանի անգամ «քաւ, քաւ» բառերը, Սոս անունով Հաւարարցի մեծատունը ալ եւս չհամբերելով լոցուց ճառախօսը բարձր գոռալով. «Այ Տէր Եսայու աղայ, դու՛ թէ

կարես՝ հոգուց խօսիր, թէ չէ, այս սուրբ եկեղեցու մէջ, հեռի՛ մեղանից, քաջերն ու ղեկերն ինչ բան ունին»:

Նազարեանց, քսանամեայ՝ Ներսիսեան դպրոցին ընթացքէ աւարտեց, սորվելով հոն քիչ մը հայերէն, ռուսերէն, պարսկերէն և գաղղիերէն. բայց կարօտ էր բարձր կրթութեան: Սմանք կը կարծեն թէ Մոսկուայի Լազարեանց ճեմարանն ալ քիչ մը ժամանակ անցած ըլլայ: Վերջապէս ինքն ալ յաջողեցաւ Արուսեանի նման մեկնեալ մը գտնելով անցնիլ Դորպատի համալսարանը 1832ին, իրեն աւագանի ընկերորջը քով: Այժմ տարի վերջ անարտիւն իւր ուսումը, և երկու տարւոյ չափ ֆրէնէ և Քրոսսէի աշակերտելով Պետերբուրգի մէջ, առաջինէն արաբերէնի և պարսկերէնի, իսկ երկրորդէն հայկաբանութեան դաս առաւ: 1842ին Ղազանի համալսարանը փոխուելով, չորս տարի ետքը ստացաւ Արեւելեան լեզուաց ուսուցչութեան աստիճանը. ուր միեւնոյն ժամանակ դասատու էր հայերէն լեզուի, գրականութեան և պատմութեան: 1849ին հրաւիրուեցաւ Լազարեան ճեմարանը, ուսուցչի կարգուելով արաբացուց և պարսից գրականութեան, որուն մէջ հայկականէն աւելի հմուտ էր: 1860ին թիֆլիս գնաց իւրեւ տեսուչ Ներսիսեան դպրոցին և երկու տարի վերջ ի Մոսկուա դարձաւ՝ Լազարեան ճեմարանը՝ առաջին պաշտօնով, ուր և մնաց մինչեւ 1879 ապրիլի 26, իր մահուան օրը:

Այսքան փրտութեամբ լցուած Նազարեանցը, ուսուցչութիւնէ զատ՝ պէտք էր որ մեծամեծ օգուաններ մատուցանէր ազգին ամբողջութեան, զոր անկեղծ և վառ սրտով կը սիրէր. պէտք էր անոր կարօտութեանց ու հիւանդութեանց յարմար դարման մտածէր, երբ ազգին ծառայելու պատրաստականութեամբ կը արուվէր կուրծքը. թէ յայտմ

1. Հիւսիսափայտ, 1864 թ. 3 հր. 320-6: Հմմտ. Ա. Երեցեանցի «Ստեփանոս Նազարեանց և նորա գրականական գործունէութիւնը» (Փոթք, 1879, թ. 4, էջ 31-83. 1880 թ. 1, էջ 33-87 և պատասխան Ս. Շահազիզեանի 1881 թ. 4, էջ 211-264): Ս. Շահազիզեանի

«Հրապարակախօս ձայն» (Մոսկուա 1881): Արարատեան Ռիմազրաւ ընդգծմ օտտան յարուցելուց ամենապատուական լեզուական լեզուիչ հայաց» (Տիֆլիս 1858): Յովսէփ Զեքեզեանց (Մեղրա Հայաստանի 1860):

մըշափ յաջողեցաւ և կամ գործը իր եռանդեան համապատասխանեց, պիտի ցուցնեմք իրեն իւրաքանչիւր գրուածները յիշատակելով:

Նազարեանց ուսեւերնով բացաւ իր գրական աշխատութիւններուն զուրը. բաց ի ուսեւերէն մէկ գրուածքէն «Տեսութիւն հայկական դպրոցական», որ ուսուցչութեան տնտեսքը ձեռք բերելու համար հանեց 1846ին, ունի երկու ուրիշ աշխատութիւններ ալ նոյն լեզուով, մին 1849ին տպուած ի Ղազան, Ալադուր Ղաւթմ ֆերդուսի՝ հեղինակ Շահնաւի անուամբ ծանօթ թարգմանող գրքին. որուն կցած է համառօտ տեսութիւն մը պարսկական բանաստեղծութեան մինչև ժեղարու վերջերը: Միւսը 1857ին հրատարակուած ի Մոսկուա, Թարգմանութիւն մը պարսկերէնէ, Սաադի — Մուսլիհէդդին Շէյխի կիլիսիական գրքին: Սակայն ասոնցմէ աւելի կարեւոր են մեզ հայերէն լեզուով հրատարակածները:

Առաջին աշխատութիւնը, որով սկսած է Նազարեանց հայերէն լեզուով իր գրական գործունէութիւնը, Փարսկական Հոգեբանութեան ձառն է տպուած ի Մոսկուա 1851ին: Երիցեան կ'ապացուցանէ թէ գիրքս Թարգմանուած է ուսեւերէնէ, և հակառակ Ս. Շահազիդեանի պաշտպանութեան, սուր լեզուով մը կը գատապարտէ Նազարեանցի ընտրութիւնը, գրաբար գրելուն պատճառը և անոր լեզուն, և յիշատիկ կարելի չէ արդարացինէլ այնպիսի անմարս գրութեան մը՝ հրապարակ նետուելուն պատճառը. եթէ աչք մը տանք անոր յառաջաբանին ուր Նազարեանց կը խոստովանի թէ ձեռք զարկած է այդ գործին ազգին խեղճութեան ու տգիտութեան արգահատելով: Իսկ գրաբարով գործի կը սկսէր «առ ի ցնդել և փարատել զտարակոյս կասկածամիտ արանց ոմանց՝ որք չի ևս պիտեն թէ և մեր ուսեւալ է փոքր ի շատէ պաշտել զպարութիւնն ի ժանգոտեալն աննորոգելի հնութեամբ լեզու. առաջնոց Հայկազանց»: Արձազանգ մ'է սա իրեն կէմ ելած թշնամութեանց զոր «Տեսութիւն հայկական պարութեան» ուսեւերէն գրելով հանեց, ժամանակին հայկաբան կոչուած հայ

գիտնականները հիմա՜ն ու խաւարապաշտ անուանելով:

Գրաբարով իր հակառակորդները ջանջախեղէն ետքը, մէկիկ նետեց ալ ևս այդ «Ժանգոտած» զենքը և գործել սկսաւ իրեն սիրած ու վարբնած աշխարհաբարով: 1853ին հրատարակեց ի Մոսկուա, Վարդապետարան կրօնի հասարակաց հայաստաբանմբ գիրքը. նոյն տարին դարձեալ Առաջին հոգեպետ կերպարար հայազգի երեսաների համար տնունով ալբերնարան մը. չենք ուզեր երկարել այս փոքր գրքըյիշերու վրայ մեր խօսքը: Նազարեանցի անուան աւելի արժանաւոր գործ է Հակոբ Նոր Հայաստաբան տնտեսով, երկու մեծ հատորներու մէջ ամփոփուած գիտական պատմական, կենսագրական, զուարճալի և սրամիտ ըստածքներու, ու ամէն տեսակ նիւթերու վրայ խօսող մատենանը, 1857–8ին տպուած: Հեղինակը կը յայտնէ յառաջաբանի մէջ թէ հաւաքած է զայդ իբրեւ «մի յարմարուոր ընթերցանութեան գիրք ազգի համար, թէ՛ արժանապէս ժամանակ անցուցանելու և թէ՛ իրեանց միտքը ճոխացնելու այնպիսի ծանօթութիւններով, որ հարկաւոր էին մեր ժամանակի փոքր ի շատէ կրթեալ հայ մարդուն»: Նազարեանցի այս գործը կը զարդարէր նոյն ժամանակուան զարգացած հայոց գրասեղանը, որովհետև Նազարեանցի գրչի տակէն դուրս եկած էր և մեծ հետաքրքրութեամբ կը կարթացուէր: Նալբանդանց՝ անոր լեզուական պակասութիւնները ցոյց տալէ վերջ, կը գովէ՝ «անշուշտ քիչ մը չափազանցութեամբ, հետեւեալ կերպով՝ «Հակոբ (որ հայաստաբան)» է մի ընտիր պատուական գիրք ընթերցանութեան՝ ազգիտ փոքր ի շատէ գրագէտ բազմութեան և զարգացած մանուկների համար», և կ'անուանէ զանիկա «մի յաւիտեանական գեղեցիկ արձան, որով պիտոյ է անմահանայ նորա (Նազարեանցի) միշտ գեղեցիկ անունը»¹:

1858ին դարձեալ տպուեցաւ, Պէննար տէն տը Սէն Բիէրի գեղեցիկ վէպը Պարոս

1. Հիւսիսփայլ, 1858 թ. N° 4

և վիրգիկիտ հանգերն Հնգկական խորհրդով, Նազարեանցի գրչով հայացած: Իր միտ տարզերն ալ գործերն ալ յիշելու համար, ընենք թէ 1870ին հրատարակեց Պատմութիւն Պեղագոգիկայի (բրգմ. գերմաներենէ) և երկու հաստ ձառ, Ներսիսեան գրչոցի տա-րեկան համարատուութեան տետրակին մէջ. և 1871ին, Տփղիսու մէջ, Տեսական և գործ-նական տառերոց առաջ լեզուի: Բաց ասոնց-մէ Նազարեանց թողուց քանի մը անտիպ գրութիւնք. որոցմէ սմանք աւարտած ալ չեն. իր մահուանէն վերջ հրատարակուած կը գտնենք Գրոպի. և Պտտ. Հանգերի մէջ (1888, էջ 234) իր ամենաընդիր գրութիւն-ներէն մէկը. Հայոց ժողովուրդը, հար աշ-մեան լեզուի և մատենագրութեան վիճակը Ռուսաստանում, համաստ տեսութեամբ. 1876ին գրուած գրեթէ 30 էջ կազմող այս քննութիւնը կը խօսի ժամանակին առաւելայ թիւթիւրուն, անոնց լեզուին և պարտեա-կութեան վրայ: Նայն Հանգերին մէջ կարճեալ, «Ազգ մը Վարդեր Հայաստանի օրագրին» (Մոլ, 1889, էջ 282), զոր Հիւսիսափայլի գաղթելէն չորս տարի վերջ կ'ուզէր հրապա-րակ հանել, և որուն աշխատակցիլ խօստա-ցած էին գիտնական անձինք, Գ. Փանա-նեանց, Կ. Եղեան, Մսեր Գրիգորեան և Ս. Շահապէր: Սակայն իրմէ անկախ պատճառ-ներէ ազդիւնեցաւ կ'ըսէ Մեղրա Հայաստանի (1879, թ. 32): Ասոնք են առ հատարակ Նազարեանցի գրական ժառանկները, զանց կ'ընենք յիշել իրեն նամակները, որոցմէ տմանք Լուսայ և այլ ամապրոց մէջ հրա-տարակուած են: Անցնինք Հիմալ իր հրա-պարակական գործունէութեան օրկանին՝ Հիւսիսափայլի:

1858 թուականին էր, ինչպէս ըսինք ա-տալ, որ Հիւսիսափայլի հետ ուրիշ երկու թիւթիւր ալ յայտնուեցան. սակայն Նա-զարեանցի թիւթիւր միայն, կրիանք ըսել, ընդհանուր և բարձր նպատակ մ'ունէր. յե-զափոխիլ ազգային կեանքը, լեզուն, ցնցել ու արթնցնել մտքերը, վերանալ լայս մը սփռել, զոր իր անուամբն ալ կ'ուզէր քա-րոզել, Հիւսիսափայլի, Օրագրի ընդհանուր ազգային բուսատորթեան և դաստիարակու-

թեան: Հիւսիսափայլ 1858էն-64 հրատա-րակուեցաւ, տարի մը միայն ընդհատուելով (1863) բաժանորդաց նուազութեան պատ-ճառաւ, յետոյ նիթիական օգնութեամբ գո-րացած 1864ի մարտին նորէն սկսաւ հրա-տարակուիլ, սակայն մինչև աւարկուի հազիւ կրցաւ ղեմանալ և աւարոյն վերջը՝ իրեն ալ վերջն եղաւ: Ամէն ամիս 80 երեսէ բաղկացեալ ամսատետր մը կ'ընէր, որ կը տպուէր ի Մոսկուտ երկու տարի և վերջերք Լազարեան Հիմարանի տպարանը: Մ. Նալբանդեանց առաջին տարիները գրե-խաւոր աշխատակիցն էր. իսկ վերջին տա-րիները Նազարեանց գրեթէ առանձին էր ձեռնած: Այս հինգ տարեան շրջանին մէջ Նազարեանցի յօդուածներուն թիւը հարիւրի մօտ են, բայց շատ սակաւ են ինքնագիրը. և որոնցմէ մի քանին միայն իր նպատակին կը ծառային. կը յիշենք իր ընտրելագոյն-ները Հայկական լեզուի խորհուրդը, Հայերի կոլումբ մարդկութեան մէջ: Նազարեանցի յօդուածներէն կը տեսնուէր, ինչպէս որ կը քննադատէ Երեմեանց, թէ Հայոց ժամանա-կակից կենաց ծանօթութիւն չունէր և Հա-յաստանի աշխարհագրութեան և պատմու-թեան շատ տեղեակ չէր. իսկ աշխարհագր-լեզուն՝ որուն ջերմ պաշապանը հանդիսա-ցաւ, թարգմանութեանցը մէջ չունեցաւ այն յատկութիւնը որն որ իր ինքնագիր յօ-դուածոց մէջ հետզհետէ մշակուած կը տես-նուի:

Նազարեանցի ընդհանուր կեանքը ա-գրութեանը ալ չէ անցնելով կրեանք խոր-հրդածել, թէ ունեցաւ հոանալուն սիրտ՝ որ գործելէն աւելի զգաց. նուիրեց նա իր կեան-քը ա գրիլը առանց կարող ըլլալու դա-կան կոթող մը տնկել. աշխարհագրաբի գրո-շը ձեռքը՝ մօտեւ ասպարէզ, թարգմանական քանի մը աննշան գործեր հետոյր վրայ

1. Հիւսիսափայլը դադրեցնելու համար այլ և այլ ջանքեր եղան հակառակորդաց կողմէն (Համբաւ. Ռուսիոյ 1860, թ. 1): Վերջ Ելմի-տի Սերգեյե (Սերգեյե Արարատեան 1863, թ. 667):

Թողլով, որ իր հասած կոխներու փոշուով ծածկուեցան: Հիւսիսափայլը միայն մնաց Նազարեանցի տնուան իրբու պտակ. անով որորեց շատերուն յոյսը, անով իր տաքուկ ու օգնելու կարօտով բարեխող սիրտը յայտնի բրաւ, անով հանեց կրկին բանակներ, մին բարեկամ, միւսը թշնամի. առաջինս ներք գոլովութեանց խունկերով պատեցին իր յիշատակը, երկրորդը՝ իրեն հարուածներուն տակ աւելի զօրացան զինքը ատելու: Հիւսիսափայլ՝ ոռոսահայոց ընգուին բեւեռային աստղն եղաւ. և Նազարեանց՝ հաւատարիմ իր անկեղծ համարձակութեան. թշնամի՝ նախապաշարմանց, քարոզեց թէ կարելի է մէկ ազգ ըլլալ թէպէտ կրօնքով բաժնուած. թէ կարեւոր է ընկերութիւններ կազմել, Կաթողիկոսական, թէ պէտք է տգէտ եկեղեցականաց ազգեցութենէ ազատ մնալ յառաջադիմելու համար:

Հ. ԶՐԱՔԵԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԼ

Սկստեմք 7. — Ժամը ութուկէսը անցած սկսանք Արփա գետին բնթացքին հետեիլ՝ Թողլով կապտազոյն հոսանքները և կանաչագեղ մարգագետինները: Յանկարծ շրջապատեցին զմեզ բլրաձեւ գագաթներ որ Շիրիշփէ գիւղերուն ամփիթատրոնաձեւ սահմանը կը գծեն, և որոնց մէջէն գետը կը հոսի քարտու հովտի մը մէջ, դաշտին ճամբէն սակաւիկ մի հեռու դէպ արեւմուտք: Տասնութիւնը քանի մը վայրկեան անցնելով հասանք դուրս ցցուած սարաւանդի մը, զոր կարեցինք՝ ցած բլուրներուն աստիճանաւոր կողերէն վեր ելլելով: Վերջապէս տասնութ մէկուկէս էր երբոր հովիտներն բացուեցան, և մեր առջեւ պարզուեցաւ Աղեքսանդրապոլի դաշտին տեսարանը:

Ընդարձակ դաշտավայր մը կը ձգուի մեր առջեւ, ջրաման հարթ հաւասար մակերեսութիւնով, որուն վրայ հողը ամէն կողմը

կը շրջի: Մի միակ ընդ մը, որ հսկայաձեւ հողաբլուրայ կերպարանք ունի, դաշտավայրին հարաւային ծայրը բարձրացած է երկայն հորիզոնական գծով մը: Եւ այս դաշտին տեսարանին մէջ կը տիրէ այդ լեռնազօն պատկերը, որ արեւելեան հիւսիսէն կը տալ լրաժուի դէպ արեւմտեան հարաւ: Հրաբխային լեռանս կերպարանական և բարձրագոյն կէտերն՝ նոյն զանգուածին արեւելեան մասին վրայ են, և այս կէտերը կը ցուցնեն հրաբխային բաժակին արտաքին ճեղքուած կողման պատառուած շրջագիծն (profile), մշտնջենաւոր ձիւնով կը շողան նոյն կէտերն: Այս լեռան հիւսիսային համեմատութիւններուն գաղափար մը կընայ առնուիլ՝ անոր դէպ ի լայնութիւն տարածութեան անհիմն չափէն: Դէպ արեւելք՝ սահմանազլի լեռնաշղթաներն արգիլել են հրաբխային հոսանքները, որոնք դէպ արեւմուտք Արփային հովտին մէջ վազել են՝ հրաբխին զլիսաւոր կամ երկրորդական կէտերէն: Այս հովտին, որ Անոյ շրջակայքն է, և հրաբխին ու սահմանազլի շղթային միաժողով կողերուն մէջէն անցնող ճամբուն մէջ եղած հեռաւորութիւնն 40 մղոնէ աւելի է: Այս ընդարձակութեան մէջ դաշտավայրէն անդին խոշոր հսկայն բարձրացել է, որուն գլուխն ու մարմինը սահմանազլի լեռնաշղթային շրջանակին գիծաց կը հանգչին, իսկ ոտքը տարածուած է դէպ ի պատմական գետին եզերքը:

Ճանապարհորդին համար ճոխ վարձք մ'է այս տեսարանն. կանգ առինք զարմանալու և այդ տեսարանը լաւ ըմբռնելու համար: Դժուարաւ կը հաւատայինք որ այդ ձիւնապատ գագաթներն 30 մղոնէն աւելի հեռու էին, սակայն քարտէսի վրայ ակնարկ մը համոզեց զմեզ թէ այդ այդպէս է: Դաշտավայրին երեսին բարձրութիւնը գրեթէ 5000 ոտք է, իսկ վերոյիշեալ գագաթներն 13,000 ոտք բարձր են: Մեր և լեռան ստորոտին մէջ՝ տեսարանը խափանող բնաբան մը չի կար, և որ անընդհատ գծով կը ձգուէր հողոյ և քարի մութ ընդարձակութիւններուն մէջէն, որոնք այլած մարդի մէջ կաւաքարի գոյնով ներկուած են. կայ անոնց